

**ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵՆՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՐՃ ՀԱՐՑԱՇԱՐ
ԸՍՏ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ՀՄՄ)**

	ՀՄՄ-ի կոդ	Ցուցանիշ	Սահմանում	2011	2012	2013
1.	i112	Ֆիքսված հեռախոսակապի բաժանորդագրություններ	Ֆիքսված հեռախոսակապի բաժանորդագրությունները ներառում են անալոգային ֆիքսված հեռախոսագծերի ակտիվ համարների, VoIP բաժանորդագրությունների, ֆիքսված անլար տեղական կապի (WLL) բաժանորդագրությունների, ISDN ձայնային ալիքների համարժեքների և ֆիքսված հանրային վճարովի հեռախոսների գումարը:	586943	583685	578446
2.	i271	Շարժական-բջջային հեռախոսակապի բաժանորդագրություններ	Վերաբերում է դեպի հանրային համակցված հեռախոսային ցանց բաժանորդագրությունների թվին, որը մուտք է ապահովում դեպի PSTN՝ օգտագործելով բջջային տեխնոլոգիաներ: Ցուցանիշը ներառում է հետվճարային բաժանորդագրությունների համարները, ինչպես նաև ակտիվ կանխավճարային հաշվեհամարները (որոնք ակտիվ են եղել վերջին 3 ամիսների ընթացքում): Ցուցանիշը կիրառելի է բոլոր շարժական-բջջային կապի բաժանորդագրությունների համար, որոնք առաջարկում են ձայնային հաղորդակցություն: Այն բացառում է բաժանորդագրությունները տվյալների քարտերի կամ USB մոդեմների միջոցով, բաժանորդագրությունները դեպի հանրային շարժական կապի տվյալների ծառայություններ, մասնավոր թրանքինգային (trunked) շարժական ռադիոկապ, հեռակետ, ռադիո փեյջինգ և հեռուստաչափական ծառայություններ:	3211215	3322837	3346275
3.	i271twb	Անլար-լայնաշերտ կապի բաժանորդագրություններ	Անլար-լայնաշերտ կապի բաժանորդագրություններ պետք է կազմեն հանրային ինտերնետի արբանյակային լայնաշերտ կապի, ցամաքային ֆիքսված անլար լայնաշերտ կապի և ակտիվ շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունների գումարը: Լայնաշերտ կապի բաժանորդագրությունների գովազդվող ներբեռնման արագությունը կազմում է առնվազն 256 կբիթ/վ: Շարժական լայնաշերտ կապի դեպքում միայն ակտիվ բաժանորդագրություններն են ներառվում (որոնք կատարել են առնվազն մեկ մուտք դեպի ինտերնետ վերջին երեք ամիսների ընթացքում կամ ունեն առանձնացված տվյալների պլան): Ծառայությունը կարող է լինել ավտոնոմ տվյալների քարտի կիրառմամբ, կամ հավելյալ ծառայություն ձայնային պլանում: Ցուցանիշը չի ներառում ֆիքսված (լարային)-լայնաշերտ կամ Wi-Fi բաժանորդագրությունները: Պետք է ներառվեն և բնակելի և աշխատանքային բաժանորդագրությունները:	808548	863824	931922

4.	i271mw	Ակտիվ շարժական-լայնաշերտ կապի բաժանորդագրություններ	<p>Ակտիվ շարժական-լայնաշերտ կապի բաժանորդագրությունները պետք է կազմեն դեպի հանրային հնտերնետ ստանդարտ շարժական լայնաշերտ կապի բաժանորդագրությունների և առանձնացված շարժական կապի տվյալների բաժանորդագրությունների գումարը: Դրա մեջ են մտնում իրական բաժանորդները և ոչ պոտենցիալ բաժանորդները՝ նույնիսկ եթե վերջիններս ունեն լայնաշերտ կապի հնարավորությամբ սարքեր: Բաժանորդագրությունները պետք է ներառեն բաժանորդագրության պարբերական վճար կամ համապատասխանեն օգտագործման պահանջներին. օգտագործողները պետք է մուտք գործած լինեն հնտերնետ վերջին երեք ամսվա ընթացքում: Սա ներառում է բաժանորդագրությունները դեպի շարժական-լայնաշերտ կապի ցանցեր, որոնք ապահովում են ներբեռնման առնվազն 256 կբիթ/վ արագություն (օր՝ WCDMA, HSPA, CDMA2000 1x EV-DO, WiMAX IEEE 802.16e և LTE):</p>	801891	858524	923284
5.	i4213tfb	Ֆիքսված (լարային)-լայնաշերտ կապի բաժանորդագրություններ	<p>Նշանակում է դեպի հանրային հնտերնետ բարձր արագությամբ մուտք գործելու բաժանորդագրություններ (TCP/IP միացում), որի նվազագույն արագությունը պետք է հավասար լինի կամ գերազանցի 256 Կբիթ/վրկ արագությունը: Սա ներառում է կաբելային մոդեմի, DSL-ի, տներում/շենքերում մանրաթելային հնտերնետի և այլ ֆիքսված (լարային)-լայնաշերտ կապի բաժանորդագրությունները: Այս հանրագումարը հաշվարկվում է անկախ վճարման մեթոդից: Այն բացառում է բաժանորդագրությունները, որոնք ապահովված են մուտքով դեպի տվյալների հաղորդակցություն (ներառյալ հնտերնետ) շարժական բջջային կապի ցանցերի միջոցով: Դրանում չպետք է ներառվեն այնպիսի տեխնոլոգիաներ, որոնց ցանկը տրվում է անլար-լայնաշերտ կապի կատեգորիայում, ինչպիսիք են WiMAX-ը և այլ ֆիքսված անլար տեխնոլոգիաներ:</p>	153916	206753	234420
6.	i4214	Միջազգային հնտերնետ կապի թողունակությունը (Մբիթ/վրկ)	<p>Միջազգային հնտերնետ կապի թողունակություն նշանակում է Միջազգային հնտերնետ կապի ընդհանուր թողունակությունը վայրկյանում Մբիթ-երի հաշվարկով (Մբիթ/վրկ): Այն կազմում է բոլոր հնտերնետ փոխանակումների հոսքերի գումարը (տեղանքները, որտեղ իրականացվել է հնտերնետ փոխանակումների հոսք), որոնք առաջարկում են միջազգային լայնաշերտ կապ: Եթե թողունակությունն ասիմետրիկ է (օր.՝ ավելի շատ մուտքային, քան ելքային), մուտքային թողունակությունը պետք է տրամադրվի:</p>	26050	46942	76000